

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ

Բանալի բառեր՝ թարգմանական գրականություն, մատենագիտություն, լեզուներ, գեղարվեստական գրականություն, ժողովածուներ, արտասահմանյան գրականություն, մատենագիտական նկարագրություններ:

Keywords: translation literature, bibliography, languages, fiction, collections, foreign literature, bibliographic descriptions.

Հայաստանում դեռ նախագրային շրջանում բանավոր թարգմանությունները կատարվում էին ասորերենից և հունարենից: «Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր,- գրել է Խորենացին,- ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե կարդացողը, և թե թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտքը դրեց մի հնար գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել...» [Մարտիրոսյան, 1964, 452]:

5-րդ դարում, տառերի ստեղծումից անմիջապես հետո, «ս. Սահակ և ս. Մեսրոպ, անբաժանելի զույգը, հայ մտքի լուսավորիչները, հայ գիրերու հնարիչները ու Աստվածաշունչի աննման թարգմանիչները, մեր եկեղեցվո հայացման առաջին ռահվիրանները» ձեռնամուխ եղան «Աստվածաշունչի» թարգմանությանը [Սիոն արքեպ. Մանուկյան, 1973, 34]: Ասորերենից կատարված թարգմանությունը անգնահատելի նշանակություն ունեցավ ձևավորվող գրական հայերենի համար, որը փայլում էր թե իր բարձր գեղարվեստականությամբ և թե լեզվի անարատությամբ:

Միջնադարյան Հայաստանում թարգմանական գրքերը համարվել են ազգային մշակույթի սեփականություն և համարժեք դիտվել ոչ թարգմանական գրքերի կողքին: Ազգային մշակույթի զարգացման համար թարգմանիչների գործունեության բացառիկ նշանակությունը լիովին գիտակցվեց արդեն 5-րդ դարում, երբ թարգմանիչները սրբադասվեցին և սահմանվեց թարգմանչաց տոնը: Հայ գրականության պատմությունը ցույց է տալիս, որ հին և միջին դարերում կատարված բազմաթիվ թարգմանություններ մեծապես օգնել են հայ ժողովրդին դիմագրավելու վտանգը, պաշտպանելու և զարգացնելու ազգային մշակույթը: Տիրապետելով մի շարք լեզուների, միջնադարյան հայ մշակույթի գործիչները հնարավորություն ունեին անմիջապես բնագրով հաղորդակցվելու այլ ազգային գրականությունների նվաճումներին: Նրանք կարդում էին ասորերեն, հունարեն, լատիներեն, պարսկերեն, իսկ ավելի ուշ՝ արաբերեն և ֆրանսերեն ձեռագրեր:

Թարգմանիչների մասին հետաքրքրական տեղեկություններ ենք գտնում հայ վարքագրություններում: XI-XII դարերի թարգմանությունների հիշատակարաններից և ժամանակակիցների վկայություններից մեզ է հասել Գրիգոր Վկայասերի անունը. «Նա նորից լուսավորեց ու պայծառացրեց հայոց եկեղեցին սուրբ Լուսավորչի և Սահակ ու Մեսրոպ թարգմանիչների նման, քանզի թարգմանության շնորհք ունենալով, միշտ քննում էր բոլոր ազգերի գրքերը, և պիտանիները, որոնք պակասում էին մեր լեզվում, ջանասիրաբար թարգմանում էր անձամբ, կամ այլ հմուտ մարդկանց օգնությամբ» [Տեր-Պետրոսյան, 1984, 29]: Այստեղ նշված է նաև, որ «թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որ հնարավորություն էր տալիս առանց մեղանչելու հայոց լեզվի օրինաչափությունների դեմ, ճշգրիտ կերպով արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները» [Նույն տեղում, 10]: Եվ զարմանալի չէ, որ շատ թարգմանություններ հնչում էին որպես ինքնուրույն երկեր՝ մաքուր և զորեղ: Ավելին, հենց թարգմանիչներն են եղել հայ

առաջին գրողները: Աստվածաշնչի (հատկապես Սողոմոնի առակների և սաղմոսների), ինչպես և հունական ու ասորական հոգևոր բանաստեղծության ազդեցությամբ նրանք ստեղծեցին իրենց սեփական երկերը:

Թարգմանական ստեղծագործությունները միայն այն ժամանակ են ներգործության ուժ ստանում, երբ դրանց անհրաժեշտությունը զգացվում է: Թարգմանվող գրքերի համար ազգային գրականության մեջ միշտ էլ ազատ տեղ է լինում: Աշխարհի բոլոր գրականություններում նման ազատ տեղ անպայման կա Հոմերոսի, Դանթեի, Շեքսպիրի, Նարեկացու, Ռուսթավելու, Քուչակի, Նիզամու, Պուշկինի, Տոլստոյի, Դոստոևսկու և բոլոր մեծ գրողների համար:

Խորհրդային միության տարիներին թարգմանությունները կատարվում էին աշխարհի տարբեր լեզուներից և՛ հակառակը, հիմնականում գերակշիռ մասը թարգմանվում էր ռուսերենով: Սակայն հայերեն թարգմանություններ կատարվել են շուրջ յոթանասուն լեզվից: Աշխարհի դասական և ժամանակակից գրականության գոհար հանդիսացող հազարավոր թարգմանված գրքեր ունեցել են բազմաթիվ հրատարակություններ: Վերջիններիս մատենագիտական տվյալները հավաքագրված են մի շարք ժողովածուներում, որոնք հայ թարգմանիչների սխրանքի վառ վկայությունն են:

Կազմված նմանատիպ մատենագիտությունների շարքում, Հայաստանի ազգային գրապալատը, իսկ հետագայում Հայաստանի ազգային գրադարանը նույնպես հրատարակել են հայ թարգմանական գրականության մատենագիտություններ, որոնք իրենց մեջ ներառում են ինչպես գեղարվեստական, այնպես էլ տարբեր բնագավառներին վերաբերող գրքեր: Ըստ հրատարակման ժամանակագրության վերջիններս լույս են տեսել հետևյալ հաջորդականությամբ՝

1. Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980). Մատենագիտություն, Երևան, ՀՍՍՀ պետական գրապալատ, 1983, 778 էջ:
2. Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010). Մատենագիտություն, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2011, 216 էջ:
3. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010: Գիրք Ա. 1920-1970. Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2013, 600 էջ:
4. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010. Գիրք Բ. 1971-2010, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2014, 468 էջ:
5. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 2011-2020. Գիրք Գ, Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2021, 252 էջ:

«Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980). Մատենագիտություն»-ը կազմվել և հրատարակվել է Հայաստանի ազգային գրապալատում 1983 թ., կազմողներ՝ Գ.Գ. Հակոբյան, Գ.Ս. Միրիջանյան, Լ.Ս. Ջաբլյան, խմբագիրներ՝ Գ.Գ. Հակոբյան, Գ.Ս. Գրիգորյան: Այն ընդգրկում է 1920-1980 թթ. Խորհրդային Հայաստանում, ինչպես նաև ԽՍՀՄ տարբեր քաղաքներում հայերեն լեզվով լույս տեսած գեղարվեստական թարգմանական գրքերի մատենագիտական նկարագրությունները ըստ երկրների: Գիրքը սկսվում է պրոֆ. Լևոն Մկրտչյանի ներածականով, ով սկսել է իր շարադրանքը «...Իմանալ զբանս հանճարոյ» հայերեն թարգմանված առաջին նախադասությամբ: Մատենագիտությունը կազմված է հետևյալ հաջորդականությամբ.

- Աշխարհի ժողովուրդների գրականություն,
- ՄՍՀՄ ժողովուրդների գրականություն,
- ՄՍՀՄ առանձին ժողովուրդների գրականություն (ռուս գրականություն, այնուհետև մնացած ազգերինը՝ այբբենական կարգով),
- Արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության ժողովածուներ,
- Արտասահմանյան առանձին երկրների գրականություն (այբբենական կարգով):

Ժողովածուում ընդգրկված է նաև «Նախասովետական շրջանի թարգմանական գեղարվեստական գրականություն» հավելվածը, ուր ներկայացված են 19-20-րդ դարերում աշխարհի տարբեր երկրներում հրատարակված թարգմանված գրքերը՝ Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Բաթում, Բաքու, Երուսաղեմ, Թիֆլիս, Կոստանդնուպոլիս, Ժնև, Մոսկվա, Նոր

Նախիջևան, Շուշի, Պետերբուրգ, Ռոստով-Դոն, Սամարղանդ, Վաղարշապատ, Վենետիկ, Փարիզ: Երևանում տպագրված գրքերը շատ քիչ մաս են կազմել: Ամենաշատ թարգմանված հեղինակներից են Օսկար Ուայլդը, Լև Տոլստոյը, Ալֆոնս Դոդեն, Զարլզ Դիկենսը, Գյոթեն, Էդմոնդո դե Ամիչիսը, Հանս Քրիստիան Անդերսենը և այլն:

Մատենագիտական ժողովածուն ունի բոլոր անհրաժեշտ ցանկերը, որոնք դյուրացնում են ընթերցողի աշխատանքը, փնտրելու հեղինակին, գիրքը, թարգմանչին ու երկիրը: Իսկ նյութերը մեկ անգամ ևս վկայում են համաշխարհային գրականության հետ հայ գրականության խոր և տևական կապերի մասին: Սույն ժողովածուն հիմնականում կազմվել է ՀՍՍՀ պետական գրապալատի գրքային ֆոնդի հիման վրա, դրանք համեմատելով Մոսկվայի պետական գրադարանի և Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի քարտարանների հետ: Օգտագործվել են նաև մատենագիտական բազմաթիվ աղբյուրներ: Գրքերի նկարագրությունները կատարվել են մատենագիտության մեջ կիրառվող պետական ստանդարտի պահանջներին համապատասխան: Նկարագրությունների վերջում բացվել են բոլոր գրքերի բովանդակությունները՝ պատմվածքներ, բանաստեղծություններ, վիպակներ, ինչպես նաև տարբեր հեղինակների կամ երկրների ժողովածուները նկարագրելիս գրվել է համապատասխան երկրի անունն ու հեղինակի տվյալները: Գիրքն ունի հետևյալ ցանկերը՝ հեղինակների, թարգմանիչների, կազմողների, խմբագիրների, առաջաբանների և վերջաբանների հեղինակների, վերնագրերի և հրատարակման վայրերի: 1920-1980 թթ. ամենաշատ թարգմանված հեղինակներից են Բոնչ-Բրունիչը, Բրյուսովը, Լերմոնտովը, Մերեթելին, Հյուգոն, Պուշկինը, Օմար Խայամին:



[Advanced search](#) | [Authority search](#) | [Tag cloud](#)



Normal view

MARC view

ISBD view

Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980) : Մատենագիտություն = Армянская советская переводная художественная литература (1920-1980) : Библиография /

by [Հակոբյան, Գ.Գ \[com\]](#); [Միրիջանյան, Գ.Ս \[com\]](#); [Զաբյան, Լ.Մ \[com\]](#); [Հակոբյան, Գ.Գ \[edt\]](#); [Գրիգորյան, Գ.Ս \[edt\]](#); [Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի գրքի առևտրի գործերի պետական կոմիտե ՀՍՍՀ;](#) [Հայաստանի ազգային գրապալատ.](#)

Type: ☒ Book

Publisher: Երևան : [ՀՍՍՀ պետական գրապալատ](#), 1983

Description: 783 էջ : 22 սմ.

Subject(s): [Սովետական գրականություն -- Հայերեն թարգմանություններ -- Մատենագիտություն](#) | [Հայ մատենագիտություն](#) | [ՀԱԳ](#)

Online resources: [Կարդալ առցանց](#)

Tags from this library:

No tags from this library for this title.

★★★★★ average rating: 0.0 (0 votes)

Holdings (0)

Title notes

Comments (0)

Images


No physical items for this record

Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010). Մատենագիտությունը նախորդ ժողովածուի շարունակությունն է, որի մեջ ընդգրկված է 1981-2010 թվականներին Հայաստանի Հանրապետությունում լույս տեսած գեղարվեստական թարգմանական գրականությունը: Հրատարակվել է 2011 թվականին Հայաստանի ազգային գրապալատում:

Գիրքը կազմել են հետադարձ մատենագիտության բաժնի մատենագետները (Հակոբջանյան Մ., Սինանյան Թ., Ներսեսյան Ա., Սարաֆյան Ռ., Ասատրյան Կ.) [Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010), 2011]: Սույն ժողովածուն ունի հետևյալ հաջորդականությունը՝ նախ ընդգրկված են արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության ժողովածուները, հետո՝ արտասահմանյան առանձին երկրների գրականությունը՝ դասավորված այբբենական կարգով: Վերջում առանձնացված են քրդական, անտիկ և հին արևելքի թարգմանված գրականությունը: Ժողովածուն հիմնականում կազմվել է Հայաստանի ազգային գրապալատի, Հայաստանի ազգային գրադարանի, Խնկո Ապոբ անվան ազգային մանկանան և այլ գրադարանների գրքային ֆոնդերի հիման վրա, ինչպես նաև օգտագործվել են այլ մատենագիտական աղբյուրներ: Ելնելով այդ տարիների պատմական առանձնահատկություններից, հիմնականում ԱՊՀ երկրների գեղարվեստական գրքերի թարգմանությունները արվել են ռուսերենից, իսկ մյուս երկրների թարգմանությունները՝ բնագրերից (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, լեհերեն, հունարեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, ռումիներեն, սերբերեն, վրացերեն, ուկրաիներեն և այլն): Բոլոր գրառումները համարակալվել են և ամփոփվել ցանկերում ըստ աճման հաջորդականության:


Եթե տվյալ հեղինակից թարգմանված է մի քանի գիրք, ապա դրանք դասավորվել են սզբում՝ երկերի ժողովածուները, այնուհետև՝ առանձին երկերը այբբենական կարգով: Իսկ եթե նույն հեղինակի նույն գիրքը հրատարակվել է մի քանի անգամ, ապա տվյալ հրատարակությունները դասավորվել են ժամանակագրական կարգով: Եթե հեղինակը կրկնվել է երկու կամ ավելի անգամ, նրա անուն-ազգանուն-հայրանունը ամբողջությամբ գրվել է միայն առաջին գրանցման ժամանակ, մնացած բոլոր դեպքերում ազգանվան հետ գրվել է միայն անվան և հայրանվան սկզբնատառերը: Յուրաքանչյուր գրքի նկարագրություն ունի իր ռուսերեն թարգմանությունը:

Ինչպես նախորդ ժողովածուն, սա նույնպես ընդգրկում է բոլոր անհրաժեշտ և օժանդակ ցանկերը: Մատենագիտական գրառումները կատարվել են Հայաստանի ազգային գրապալատի կողմից հաստատված պայմանական կրճատումներով: Այս ժողովածուում նույնպես բացված են գրքերի բովանդակությունները: Որպես պետական մատենագիտության պարտադիր պայման, մատենագիտական նկարագրություններում առկա է նաև համապատասխան գրքի չափերը, գինը և տպաքանակը, իսկ որոշակի տարեթվից հետո գրվել է նաև ISBN կոդը, որը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման զուգընթաց ավելի է դյուրացնում ցանկացած գրքի որոնումը էլեկտրոնային տարբերակով:



Հաջորդ երեք գրքերը ծավալով և բովանդակությամբ ամբողջովին տարբերվում են նախորդ ժողովածուներից: Այստեղ ընդգրկված են ոչ միայն գեղարվեստական թարգմանական գրականությունը, այլ բոլոր բնագավառներին վերաբերող թարգմանված գրքերը:

1. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010: Գիրք Ա. 1920-1970, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2013, 600 էջ:
2. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010. Գիրք Բ. 1971-2010, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2014, 468 էջ:
3. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 2011-2020. Գիրք Գ. Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2021, 252 էջ:



Գիրք Ա-ն և գիրք Բ-ն ընդգրկում են 1920-2010 թթ. թարգմանված գրականությունը: Հաշվի առնելով գրառումների մեծ քանակը, որոնք հավաքվել են իննսուն տարավա ընթացքում, այն թողարկվել է երկու գրքով՝ Գիրք Ա-ն ընդգրկում է 1920-1970 թթ., իսկ Գիրք Բ-ն 1971-2010 թթ.: Առաջին գրքում՝ 1920-1970 թթ. պատմական անցյալից ելնելով՝ գերակշռում են Վ. Լենինի, Ն. Բուխարինի, Ֆ. Էնգելսի, Կ. Մարքսի, Ի. Ստալինի աշխատությունների և երկերի թարգմանությունները: Թարգմանիչների ցանկում ամենաշատը հանդիպում են Ս. Զորյանի, Խնկո Ապր, Հ. Թումանյանի, Ա. Խոնդկարյանի, Հ. Հայրապետյանի, Հ. Հարությունյանի, Հ. Մազմանյանի, Վ. Միքայելյանի, Հ. Ջաղերյանի անունները: Հիմնականում գրքերը հրատարակվել են Երևանում «Հայպետհրատ» հրատարակչությունում: Կան նաև թարգմանություններ հրատարակված Մոսկվայում, Ռոստով-Դոնում, Թիֆլիսում, Էջմիածնում, Ղարաբաղի խայտում, Մարտունավանում:

Սույն ժողովածուն խիստ տարբերվում է նախորդներից: Այստեղ ընդգրկված են բոլոր բնագավառներին և գիտություններին վերաբերող թարգմանված գրքեր, ուստի դրանց տեղաբաշխումը կատարված է ըստ համընդհանուր տասնորդական դասակարգման (УДК) կրկին այբբենական կարգով: Գիրք Ա-ն հրատարակվել է 2013 թ., իսկ Գիրք Բ-ն 2014 թ., Հայաստանի ազգային գրապալատում: Առաջին գիրքը ընդգրկում է հիսուն տարվա ընթացքում թարգմանված գրքերի մատենագիտական նկարագրությունները և կազմված է 600 էջից, իսկ երկրորդը՝ քառասուն տարվա ընթացքում և կազմված է 468 էջից:

Search Library catalog Go Cart Lists

Advanced search | Authority search | Tag cloud

Normal view MARC view ISBD view

**Հայ թարգմանական գրականություն :
Մատենագիտություն 1920-2010: Գիրք Ա.1920-1970 /**

by [Սինանյան, Թ. Վ. \[com\]](#); [Ներսեսյան, Ա. Ա. \[com\]](#);
[Ասատրյան, Կ. Մ. \[com\]](#); [Հակոբջանյան, Մ. Ս. \[edt\]](#);
[Հայաստանի ազգային գրապալատ.](#)

Type: Book
Publisher: Երևան : [Հայաստանի ազգային գրապալատի հրատարակչություն.](#), 2013
Description: 600 էջ.
ISBN: 978-99930-50-35-3 .
Subject(s): [Համաշխարհային գրականություն -- Հայերեն թարգմանություններ -- Մատենագիտություն](#) | [Հայերեն թարգմանություններ -- Մատենագիտություն 1920-1970](#) | [ՀԱԳ](#)
Online resources: [Կարդալ առցանց](#)
Tags from this library:
No tags from this library for this title.

Browse results
Previous Back to result
Print
Add to your cart
Unhighlight
Search for this title in:
[Other Libraries \(WorldCat\)](#)
[Other Databases \(Google Sc\)](#)
[Online Stores \(Bookfinder.cc\)](#)
[Open Library \(openlibrary.org\)](#)

Գիրք Բ-ի հիմնական մասը կազմում է գեղարվեստական թարգմանական գրականությունը: Այս ժամանակահավածում (1971-2010 թթ.) սկսել են թարգմանել արտասահմանյան գրողների և օտարալեզու հայ գրողների գործերը՝ Շ. Ազնավուր, Ջ. Բայրոն, Շ. Բոդլեր, Գրիմ Եղբայներ, Գ. Մարկես, Շ. Պերո, Վ. Սարոյան, Լ.-Ջ. Սյուրմեյան, Օմար Խայամ, Ֆիրդուսի և այլն:

Մատենաշարային հրատարակչություններից գերակշռում են «Համաշխարհային պոեզիա», «Կարդում ենք երեխաների համար», «Ռուս դասականների գրադարան», «Ուսանողի գրադարան», «Օգնություն դասախոսին» մատենաշարերը: Այս ժողովածուում ընդգրկված բոլոր գրքերը ունեն իրենց հերթական համարները, որոնք հեշտացնում են տվյալ գրքի հեղինակի, թարգմանչի, կազմողների, նկարիչների, վերնագրի կամ հրատարակման վայրի մասին տեղեկությունները փնտրել ցանկերում:

Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 2011-2020. Գիրք Գ.-ն Հայաստանի ազգային գրապալատի վերամիավորումից հետո հրատարակվել է Հայաստանի ազգային գրադարանում 2021 թվականին: Քանի որ այն 2013 թ. թողարկված նույնանուն գրքի շարունակությունն է, խմբագրական խորհուրդը որոշել է այն վերնագրել Գիրք Գ. (2011-2020): Բաղկացած է 252 էջից, ինչպես նաև պահպանվել են այն բոլոր ձևաչափերն ու չափորոշիչները, որով թողարկվել են նախորդ Ա. և Բ. գրքերը:

Գրքի ծանրակշիռ մասը կազմում է գեղարվեստական թարգմանական գրականությունը: Թարգմանիչները հիմնականում աշխատել են հենց բնագրերի հետ: Գիրք Գ.-ում հանդիպում ենք նոր մատենաշարերի, ինչպիսիք են «Արգելված գրքեր», «Գեղ arm» հանդես, «Էվրիկա, Էվրիկա», «Ժամանակակից ֆրանսալեզու գրականություն», «Ինչու և ինչպես», «Լիակատար Շեքսպիր 39 գրքով», «Կարդում ենք երեխաների համար», «Նոբելյան մրցանակակիրներ», «Պարտադիր ընթերցանություն», «XXI դարի արձակ», «XXI դարի քրեավեպ», «Օտարագիր»:

Գիրք Գ.-ում հրատարակման վայրերի աշխարհագրությունը ավելի ընդարձակ է: Բացի Երևանից և այլ քաղաքներից թարգմանվել և հրատարակվել են գրքեր Ստեփանակերտում, Թեհրանում, Հալեպում, Ժնևում, Բելգրադում, Գլենդելում:

Վերը նշված ժողովածուները անչափ կարևոր նշանակություն ունեն թարգմանական գրականությամբ զբաղվողների, թարգմանիչների, գրողների, գրականագետների, բանասերների, մատենագետների համար: Որպես վիճակագրական տեղեկատվություն հայ թարգմանական գրականության մատենագիտական ժողովածուները որոշակի պատկերացում են տալիս ինչպես նախաստվետական շրջանում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում 1920-2020 թթ., այլ երկրներում և վերջին տարիներին նաև Արցախում հրատարակված թարգմանական գրականության վերաբերյալ:

SUMMARY

The article focuses on foreign-language translated books published in Armenia in 1920-2020. The latter were combined and published as a three-volume bibliographic collection: volume A (1920-1970), volume B (1971-2010), volume C (2011-2020).

The bibliographic collection was compiled mainly on basis of the book collection of the National Book Chamber of Armenia. After the merger the Book Chamber with the National Library of Armenia in 2017 the collection of library and other sources were used as well. In accordance with the standards, the bibliographic description compilation has been observed, and appropriate abbreviations and acronyms have been used and organized by UDC.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010): Մատենագիտություն / Армянская переводная художественная литература (1981-2010): Библиография, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2011, 216 էջ:
2. Մարտիրոսյան Ա., Գրերի գյուտի շարժառիթների հարցի շուրջը // Բանբեր Մատենադարանի, Երևան, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան», 1964, № 7, էջ 77-95:
3. Սիոն արքեպ. Մանուկյան, Շնորհալի մեծ Հայրապետը // Էջմիածին, Ս. Էջմիածին, Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, 1973, ԺԲ, Լ տարի, № 3, էջ 32-35:
4. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, Սովետական գրող, 1984, 60 էջ: